ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«09» հոկտեմբերի 2026 թվականի N 1055-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Վարդան Իսախանյանի կողմից ինքնակամ կառուցված 30.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Չափշին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023NNKD5Q ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 30.6 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Երիտասարդության փողոց 4-րդ փակուղի թիվ 4/15*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Վարդան Իսախանյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.հոկտեմբերի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«09» հոկտեմբերի 2026 թվականի N 1054-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Համլետ Մկրտչյանի կողմից ինքնակամ կառուցված 58.0 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023TDHZYG ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 58.0 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան 6-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 1/2*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Համլետ Մկրտչյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.հոկտեմբերի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N 1053-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ա. Աղաջանյանի 12.08.2026 թվականի թիվ 3905/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով Արմեն Աղաջանյանին պատկանող ք. Չարենցավան Ս. Շահումյան փողոց թիվ 10 հասցեի գույքը բաժանել 3 միավորի և հասցեավորել որպես ք. Չարենցավան Ս. Շահումյան փողոց թիվ 10 (հողամասի մակերեսը՝ 0.0250 հա, առանձնացվող հատված-1), ք. Չարենցավան Ս. Շահումյան փողոց թիվ 10/1 /հողամասի մակերեսը՝ 0.0125 հա, առանձնացվող հատված-2) և ք. Չարենցավան Ս. Շահումյան փողոց թիվ 10/2 /հողամասի մակերեսը՝ 0.0125 հա, մնացող հատված) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.հոկտեմբերի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«09» հոկտեմբերի 2026 թվականի N 1052-Ա

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 06-ԻՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ. ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՊԱՐՏՎՈՂ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՄՈՒԾՎԱԾ ՆԱԽԱՎՃԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հրապարակային սակարկությունների մասին օրենքով, հաշվի առնելով Տիգրան Կարապետյանի 06.10.2026 թ. թիվ 4930/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2026 թվականի հոկտեմբերի 06-ին Չարենցավանի համայնքապետարանում կայացած քաղաք Չարենցավան 6-րդ թաղամաս 16-րդ շենք թիվ 42 ոչ բնակելի 158.86 քմ մակերեսով գույքի մրցույթի նախավճարը՝ 60000 ՀՀ դրամ գումար վերադարձնել պարտվող կողմ ճանաչված Տիգրան Կարապետյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N 1051-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ա. Մկրտչյանի 09.09.2026 թվականի թիվ 4353/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Արման Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 5 հասցեի գույքը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Թեղենիքի խճուղի թիվ 5*** (հողամասի մակերեսը՝ 0.14000 հա, առանձնացվող հատված-1) և ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Բջնիի խճուղի 1-ին նրբանցք թիվ 8*** /հողամասի մակերեսը՝ 0.07305 հա, առանձնացվող հատված-2) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գեոդեզիայի և չափագրումների մասնագիտացված կենտրոն» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N 1050-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Գ.Դավթյանի 16.07.2026թ. թիվ 3438/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Գայանե Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 7-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 5 հասցեի գույքը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 7-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 5*** (հողամասի մակերեսը՝ 0.16030 հա, առանձնացվող հատված-2) և ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 7-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 5/2*** /հողամասի մակերեսը՝ 0.01568 հա, առանձնացվող հատված-1) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գեոլենդ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N 1049-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով <<Մուրճ>> ՓԲԸ-ի տնօրեն Ս. Շահգելդյանի 02.10.2026թ. թիվ 4880/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով «Մուրճ» ՓԲԸ-ին պատկանող ք. ***Չարենցավան Գործարանային փողոց թիվ 6 հասցեի գույքը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***ք. Չարենցավան Գործարանային փողոց թիվ 6*** (հողամասի մակերեսը՝ 8034.97 քմ, հիմնական մաս-1) և ***ք. Չարենցավան Գործարանային փողոց թիվ 6/4*** /հողամասի մակերեսը՝ 18465.03 քմ, առանձնացվող մաս-2 միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Մանուկ Մանուկյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2026 թվականի N 1048-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Գ. Բաղդասարյանի 30.06.2026թ. թիվ 3024/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով Գուրգեն Բաղդասարյանին պատկանող ք. Չարենցավան Ս. Մելտոնյան փողոց թիվ 2/10 /հողամասի մակերեսը՝ 0.00365 հա/ և ք. Չարենցավան Ս. Մելտոնյան փողոց թիվ 2/11 /հողամասի մակերեսը՝ 0.0029 հա/ գույքը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել որպես ք. Չարենցավան Գործարանային փողոց թիվ 2/8 /հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 0.00655 հա/ միավոր:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2026 թվականի N 1047-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ժ.Սահակյանի 04.09.2026թ. թիվ 4240/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Ժանլետա Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս Վ. Մնացականյան փողոց թիվ 4 հասցեի գույքը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս Վ. Մնացականյան փողոց թիվ 4*** (հողամասի մակերեսը՝ 0.37297 հա, առանձնացվող հատված-2) և ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս Վ. Մնացականյան փողոց թիվ 4/1*** /հողամասի մակերեսը՝ 0.1000 հա, առանձնացվող հատված-1) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Գեոկադ 55» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08»հոկտեմբերի 2026 թվականի N 1046-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Գ. ՌՈՒՍՈՎԻ ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 3 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Արտակ Գրիգորյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 02102026-07-0266 վկայական) ***ք. Չարենցավան Գ. Ռուսովի փողոց 6-րդ փակուղի թիվ 3*** հասցեում գտնվող 32.3 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 32.3 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Արտակ Գրիգորյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1673 (հազար վեց հարյուր յոթանասուներեք) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2890 (երկու հազար ութ հարյուր իննսուն) դրամ:

3. ***Արտակ Գրիգորյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 9200135101559 հաշվեհամարին՝ 55000 (հիսունհինգ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 94000 (իննսունչորս հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Արտակ Գրիգորյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Արտակ Գրիգորյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.հոկտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«08» հոկտեմբերի 2026 թվականի N 1045-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Անուշ Նազարյանի կողմից ինքնակամ կառուցված 20.78 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Հայկ Ավագյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023HMXNVE ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 20.8 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան 6-րդ թաղամաս 2-րդ փողոց թիվ 11/5*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Անուշ Նազարյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«08» հոկտեմբերի 2026 թվականի N 1044-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 15-ին անցկացվելիք թիվ ութերորդ նստաշրջանի թիվ 2(10) հերթական նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝

●***/նախագիծ 87-Ա/*** Չարենցավան համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.
●***/նախագիծ 88-Ն/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
●***/նախագիծ 89-Ա/*** Չարենցավան համայնքի 2026 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին.
●***/նախագիծ 91-Ա/*** Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ավտոմեքենաները աճուրդային կարգով օտարելու մասին
●***/նախագիծ 94-Ա/*** Չարենցավան համայնքի կարիքների համար ֆինանսական վարձակալությամբ /լիզինգով/ տեխնիկա ձեռք բերելու մասին.

1.2 Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝

●***/նախագիծ 92-Ա/*** «ՍՈՒԼԻՁՈՐ-3» ՍՊԸ-ի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով Արզականի մարմարի հանքավայրի Սուլիձոր տեղամասում կատարվելիք օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին համաձայնություն տալու մասին

1.3 Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողով՝

●***/նախագիծ 90-Լ/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2004 թվականի մարտի 26-ի թիվ 3/11 որոշման 2-րդ կետում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

●***/նախագիծ 93-Ա/*** Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն Յուրիկ Մայիսի Հարությունյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2026 թվականի N 1043-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Ա. Արշակյանի 17.09.2026թ. թիվ 4560/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն սեփականության իրավունքով Արշակ Արշակյանին պատկանող Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 22-րդ փողոց թիվ 9/1 /հողամասի մակերեսը՝ 0.06407 հա/ և Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 22-րդ փողոց թիվ 7 /հողամասի մակերեսը՝ 0.15795 հա/ գույքը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել որպես Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 22-րդ փողոց թիվ 7 /հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 0.22202 հա/ միավոր:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն <<Գիս-Արտ>> ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.հոկտեմբերի 08
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2026 թվականի N 1042-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 4 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25-րդ կետի և 32-րդ կետի ա/,բ/ ենթակետերի պահանջներով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, և հիմք ընդունելով Ա. Հարությունյանի 28.09.2026 թվականի թիվ 4749/07 դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի թիվ 4 բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները:
2. Ընդունել ի գիտություն, որ Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի թիվ 4 բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սահմանել, որ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Արմեն, Ջուլիանա, Սեդրակ Հարությունյաններին և Ստելլա Հովհաննիսյանին պատկանող 4-րդ թաղամասի 4-րդ շենքի թիվ 2 բնակարանին կցակառույց 10.4 քմ արտաքին մակերեսով օրինական ճանաչված շինության և ինքնակամ բացված 1 դռան համար 30 օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին 9000 ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն «Գոռ Սահակյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026YBWBAE ծածկագրի:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» հոկտեմբերի 2026 թվականի N 1041-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննելով Նվեր Վաչագանի Ալեքսանյանի բերած վարչական բողոքը՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդան անտառտնտեսության մասնաճյուղի Արզնի անտառտնտեսության 1-ին պահաբաժնի տարածքում Նվեր Վաչագանի Ալեքսանյանի կողմից ինքնակամ կառուցված բետոնե հիմքով փայտյա տաղավարները ապամոնտաժելու գործողություններից ձեռնպահ մնալու մասին.

1.Գործի նախապատմությունը և դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Համաձայն Հանրապետության քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Սուրեն Մինասյանի 2026 թվականի օգոստոսի 07-ի թիվ ՔՏՄ/20.6/21889-26 գրության և կից արձանագրության և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետի տեղակալ Հարություն Մարտիկյանի 2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ Ե/3/2134-26 գրության՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Արզնիի անտառապետության 1-ին պահաբաժնում (Կարենիս բնակավայր, կոորդինատներ՝ x: 40.232640 y: 44.360769)՝ անտառային հողից ապօրինի զավթել է 0,09 հա մակերեսով տարածք և ինքնակամ տեղադրել է թվով 5 տաղավարներ՝ 3x5մ, 3x5մ, 3x5մ, 3x5մ և 9x4մ չափերով: Տաղավարների ամրացման համար կատարված են բիտոնային աշխատանքներ:

Փաստի առթիվ 12.08.2026 թվականին Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է թիվ 826-Ա որոշումը՝ «Քաղաքացի Նվեր Վաչագանի Ալեքսանյանի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և լսումների օր նշանակելու մասին»:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 17-ին, ժամը՝ 16:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Նվեր Վաչագանի Ալեքսանյանը: Ն. Ալեքսանյանը ներկայացել է վարչական վարույթի լսումներին, և հայտնել է, որ մոտավորապես երեք տարի առաջ դիմել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ տարածքը վարձակալելու համար, սակայն ոչ մի պատասխան դեռևս չի ստացել: Ն. Ալեքսանյանը հաստատեց, որ ինքն այս պահին չունի իր կատարած գործողությունների օրինականությունը հավաստող որևէ փաստաթուղթ և համապատասխան թույլտվություն, հետևաբար դրանք ապօրին են: Ն. Ալեքսանյանը հայտնեց նաև, որ վերը նշված աշխատանքներն իր կողմից կատարվել են դեռևս 2000 ական թվականներին:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նվեր Ալեքսանյանն ընդունել է, որ նշված իրավախախտումը կատարել է պետական սեփականություն հանդիսացող «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Արզնիի

անտառպետության 1-ին պահաբաժնի հողատարածքի վրա՝ առանց համապատասխան թույլտվության, և վերջինիս բացատրությունը՝ տվյալ աշխատանքները 2000 ական թվականներին կատարելու վերաբերյալ, հանձնաժողովը նպատակահարմար է համարել՝ ինքնակամ շինությունները քանդել և պետական սեփականություն հանդիսացող հողամասը նախկին տեսքի բերել, ինչպես նաև վարչական պատասխանատվությունից ազատել՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը անցած լինելու հիմքով:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները՝ համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի օգոստոսի 18-ին ընդունվել է «Ինքնակամ շինությունները քանդելու և պետական սեփականություն հանդիսացող հողամասը նախկին տեսքի բերելու, ինչպես նաև վարչական պատասխանատվությունից ազատելու մասին» թիվ 840-Ա որոշումը:

2026 թվականի սեպտեմբերի 15-ին Նվեր Վաչագանի Ալեքսանյանը Չարենցավան համայնքի ղեկավարին ներկայացրել է վարչական բողոք՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդան անտառտնտեսության 1-ին պահաբաժնի տարածքում Արտյոմ Կառլենի Դավթյանի կողմից ինքնակամ կառուցված բետոնե հիմքով փայտյա տաղավարներն ապամոնտաժելու գործողություններից ձեռնպահ մնալու մասին:

23.09.2026 թվականին Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է թիվ 945-Ա վարչական բողոքարկման վարույթը: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հոկտեմբերի 06-ին ժամը 12:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Նվեր Վաչագանի Ալեքսանյանը:

2. Վարչական մարմնի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Ն. Ալեքսանյանը ներկայացել է վարչական վարույթի լսումներին, և հայտնել է, որ իր կողմից որևէ արարք չի կատարվել, որը վարչական մարմնի կողմից դիտարկվել է անօրինական, քանի որ դեռևս 2023 թվականին դիմել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ տարածքը վարձակալելու համար, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել: Վերջինս խնդրեց, որպեսզի համայնքի ղեկավարը ձեռնպահ մնա ինքնակամ շինություններն ապամոնտաժելու գործողություններից, մինչև «Հայանտառ» ՊՈԱԿ-ից կստանա համապատասխան թույլտվությունները:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը և ներկայացված վարչական բողոքը՝ գտնում եմ, որ այն ենթակա է մերժման, իսկ Չարենցավան համայնքի ղեկավարի՝ «Ինքնակամ շինությունները քանդելու և պետական սեփականություն հանդիսացող հողամասը նախկին տեսքի բերելու, ինչպես նաև վարչական պատասխանատվությունից ազատելու մասին» 2026 թվականի օգոստոսի 18-ի թիվ 840-Ա որոշումը առանց փոփոխության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «...Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները...»:

«...Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը...»:

Վարույթի ընթացքում Նվեր Վաչագանի Ալեքսանյանի կողմից բետոնե հիմքով փայտյա տաղավարների կառուցման կամ տեղադրման թույլտվության վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պատվիրակված լիազորություն.

1) համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները.

ՈՐՈՇԵՑԻ

1. Մերժել Նվեր Վաչագանի Ալեքսանյանի վարչական բողոքը:
2. ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի՝ 18.08.2026թ. «Ինքնակամ շինությունները քանդելու և պետական սեփականություն հանդիսացող հողամասը նախկին տեսքի բերելու, ինչպես նաև վարչական պատասխանատվությունից ազատելու մասին» թիվ 840-Ա որոշումը թողնել անփոփոխ:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ուղարկել Նվեր Վաչագանի Ալեքսանյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» հոկտեմբերի 2026 թվականի N 1040-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննելով Արտյոմ Կառլենի Դավթյանի բերած վարչական բողոքը՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդան անտառտնտեսության մասնաճյուղի Արզնի անտառտնտեսության 1-ին պահաբաժնի տարածքում Արտյոմ Կառլենի Դավթյանի կողմից ինքնակամ կառուցված բետոնե հիմքով փայտյա տաղավարները ապամոնտաժելու գործողություններից ձեռնպահ մնալու մասին.

1.Գործի նախապատմությունը և դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետի տեղակալ Հարություն Մարտիկյանի 2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ Ե/3/2136-26 գրության և կից արձանագրության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Սուրեն Մինասյանի 2026 թվականի օգոստոսի 14-ի թիվ ՔՏՄ/20.6/22368-26 գրության՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Արզնիի անտառպետության 1-ին պահաբաժնում (Կարենիս բնակավայր, կոորդինատներ՝ x: 40.233044 y: 44.360313)՝ անտառային հողից ապօրինի զավթել է 0,22 հա մակերեսով տարածք և ինքնակամ տեղադրել է թվով 3 տաղավարներ՝ 6x2մ, 4x2մ, 9x2մ չափերով և 80մ երկարությամբ և 0,02մ լայնությամբ պարիսպ: Տաղավարների ամրացման համար կատարված են բիտոնային աշխատանքներ:

Փաստի առթիվ 13.08.2026 թվականին Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է թիվ 830-Ա որոշումը՝ «Քաղաքացի Արտյոմ Կառլենի Դավթյանի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և լսումների օր նշանակելու մասին»:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 17-ին, ժամը՝ 15:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Արտյոմ Կառլենի Դավթյանը: Ա. Դավթյանը ներկայացել է վարչական վարույթի լսումներին, և հայտնել է, որ մոտավորապես երեք տարի առաջ դիմել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ տարածքը վարձակալելու համար, սակայն ոչ մի պատասխան դեռևս չի ստացել: Ա. Դավթյանը հաստատել է, որ ինքն այս պահին չունի իր կատարած գործողությունների օրինականությունը հավաստող որևէ փաստաթուղթ և համապատասխան թույլտվություն, հետևաբար դրանք ապօրինի են: Ա. Դավթյանը հայտնել է նաև, որ տվյալ հողամասը դեռևս 35 տարի առաջ օգտագործվել է իր պապիկի կողմից, իսկ վերը նշված աշխատանքներն իր կողմից կատարվել են դեռևս 2000 ական թվականներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի օգոստոսի 18-ին ընդունվել է «Ինքնակամ շինությունները քանդելու և պետական սեփականություն հանդիսացող հողամասը նախկին

տեսքի բերելու, ինչպես նաև վարչական պատասխանատվությունից ազատելու մասին» թիվ 838-Ա որոշումը:

2026 թվականի սեպտեմբերի 17-ին Արտյոմ Կառլենի Դավթյանը Չարենցավան համայնքի ղեկավարին ներկայացրել է վարչական բողոք՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդան անտառտնտեսության 1-ին պահաբաժնի տարածքում Արտյոմ Կառլենի Դավթյանի կողմից ինքնակամ կառուցված բետոնե հիմքով փայտյա տաղավարներն ապամոնտաժելու գործողություններից ձեռնպահ մնալու մասին:

23.09.2026 թվականին Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է թիվ 946-Ա վարչական բողոքարկման վարույթը: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հոկտեմբերի 06-ին ժամը 11:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Արտյոմ Կառլենի Դավթյանը:

2. Վարչական մարմնի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Ա. Դավթյանը ներկայացել է վարչական վարույթի լսումներին, և հայտնել է, որ իր կողմից որևէ արարք չի կատարվել, որը վարչական մարմնի կողմից դիտարկվել է անօրինական, քանի որ դեռևս 2022 թվականին դիմել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ տարածքը վարձակալելու համար, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել: Վերջինս խնդրել է, որպեսզի համայնքի ղեկավարը ձեռնպահ մնա ինքնակամ շինություններն ապամոնտաժելու գործողություններից, մինչև «Հայանտառ» ՊՈԱԿ-ից կստանա համապատասխան թույլտվությունները:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը և ներկայացված վարչական բողոքը՝ գտնում եմ, որ այն ենթակա է մերժման, իսկ Չարենցավան համայնքի ղեկավարի՝ «Ինքնակամ շինությունները քանդելու և պետական սեփականություն հանդիսացող հողամասը նախկին տեսքի բերելու, ինչպես նաև վարչական պատասխանատվությունից ազատելու մասին» թիվ 838-Ա որոշումը առանց փոփոխության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «...Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները...»:

«...Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը...»:

Վարույթի ընթացքում Արտյոմ Կառլենի Դավթյանի կողմից բետոնե հիմքով փայտյա տաղավարների կառուցման կամ տեղադրման թույլտվության վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի համար 912-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պատվիրակված լիազորություն.

1) համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող

հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները.

ՈՐՈՇԵՑԻ

1. Մերժել Արտյոմ Կառլենի Դավթյանի վարչական բողոքը:
2. ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի՝ 18.08.2026թ. «Ինքնակամ շինությունները քանդելու և պետական սեփականություն հանդիսացող հողամասը նախկին տեսքի բերելու, ինչպես նաև վարչական պատասխանատվությունից ազատելու մասին» թիվ 838-Ա որոշումը թողնել անփոփոխ:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ուղարկել Արտյոմ Կառլենի Դավթյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2026 թվականի N 1039-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՎԵՐԱԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումների դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

ıրոշում եմ.

Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Նարինե Դարբինյանի կողմից ինքնակամ կառուցված 23.8 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Չափշին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023HRRG39 ծածկագրի:

2. Առևտրի սրահի սպասարկման նպատակով առանձնացված 23.8 քմ մակերեսով՝ բնակավայրերի ընդհանուր օգտագործման նշանակության հողատարածքի գործառնական նշանակությունը համարել փոխված՝ որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասով անցնող խմելու ջրագիծը Չարենցավան համայնքում 2016-2017թթ. ընթացքում իրականացված «Չարենցավան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավումը» ծրագրի շրջանակներում տեղափոխվել է, որի արդյունքում նշված հողամասն այլևս չի դասվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի դասին:

3. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:

3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Մ. Խորենացու փողոց 2-րդ փակուղի թիվ 2/4*** հասցեով:

5. Սույն որոշմամբ ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 10.09.2024թ. թիվ 1429 որոշումը:

6. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

7. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Նարինե Դարբինյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2026 թվականի N 1038-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Միրզայան	Ալբերտ	15000	դրամ
Բաբաջանյան	Անատոլի	10000	դրամ
Սարգսյան	Գայանե	10000	դրամ
Մարտիրոսյան	Գայանե	10000	դրամ
Մանուկյան	Մարետա	10000	դրամ
Մկրտումյան	Մարիետա	10000	դրամ
Անտոնյան	Ռետա	10000	դրամ
Շահբազյան	Շողիկ	10000	դրամ
Կորնեեվա	Ալլա	15000	դրամ
Գրիգորյան	Լալա	15000	դրամ
Յազմաջյան	Հովհաննես	30000	դրամ
Ավետիսյան	Մելանյա	30000	դրամ
Բաղդասարյան	Սվետլանա	30000	դրամ
Եղիյան	Ժամելլա	30000	դրամ
Դավթյան	Գայանե	10000	դրամ
Վարդանյան	Հռիփսիմե	20000	դրամ
Զաքարյան	Արամազդ	10000	դրամ
Վարդանյան	Մարինե	10000	դրամ
Բունիաթյան	Անահիտ	10000	դրամ
Պետրոսյան	Վարդուհի	10000	դրամ
Աբրահամյան	Սարգիս	20000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.հոկտեմբերի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» հոկտեմբերի 2026 թվականի N 1038-Ա
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումը սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

Միրզայան	Ալբերտ	15000	դրամ
Բաբաջանյան	Անատոլի	10000	դրամ
Սարգսյան	Գայանե	10000	դրամ
Մարտիրոսյան	Գայանե	10000	դրամ
Մանուկյան	Մարետա	10000	դրամ
Մկրտումյան	Մարիետա	10000	դրամ
Անտոնյան	Ռետա	10000	դրամ
Շահբազյան	Շողիկ	10000	դրամ
Կորնեեվա	Ալլա	15000	դրամ
Գրիգորյան	Լալա	15000	դրամ
Յազմաջյան	Հովհաննես	30000	դրամ
Ավետիսյան	Մելանյա	30000	դրամ
Բաղդասարյան	Սվետլանա	30000	դրամ
Եղիյան	Ժամելլա	30000	դրամ
Դավթյան	Գայանե	10000	դրամ
Վարդանյան	Հռիփսիմե	20000	դրամ
Զաքարյան	Արամազդ	10000	դրամ
Վարդանյան	Մարինե	10000	դրամ
Բունիաթյան	Անահիտ	10000	դրամ
Պետրոսյան	Վարդուհի	10000	դրամ
Աբրահամյան	Սարգիս	20000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.հոկտեմբերի 07
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» հոկտեմբերի 2026 թվականի N 1037-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 6-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 29-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հովակիմ Հակոբյանը դիմել է ք. Չարենցավան 6-րդ թաղամասի 29-րդ շենքի թիվ 7/1 հասցեով բնակարանի նկատմամբ Չարենցավան համայնքի սեփականության իրավունքը նվիրատվությամբ օտարելու խնդրանքով:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարին կից բնակարանային հարցերով հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 3 նիստի արձանագրությունը, համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 73-Ա որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 29-րդ շենքի թիվ 7/1, մեկ սենյակից բաղկացած 17,04 (տասնյոթ ու չորս) քմ ընդհանուր մակերեսով, 4 360 000 (չորս միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) դրամ շուկայական արժեքով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել վարձակալին որպես նրա սեփականություն, ինչի մասին կնքել համապատասխան պայմանագիր:
2. Բնակարանի սեփականատեր ճանաչել՝ ***Մարիեփա Մկրտումյանին, Գեղամ Մկրտումյանին, Գևորգ Մկրտումյանին, Մարգարիտ Մկրտումյանին***
3. Հիշյալ բնակարանը սահմանված կարգով հանել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկից:
4. Սեփականատերը պարտավոր է վճարել՝
   Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար Չարենցավանի համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ
5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** կնքել նշված բնակարանի նվիրատվության պայմանագիրը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026 թվականի N 1036-Ա

ԱՐԱՐԱՏ ԲԵԺԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱՐԶԱԿԱՆ ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 17 դեկտեմբերի 2025 թվականի <<<<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ 397-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին>> օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնք, գյուղ Արզական Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց փակուղի թիվ 6 հասցեի 0.05615 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա, որը չի դասվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին, 1980 թվականին ինքնակամ կառուցված 174.8 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերես՝ 143.1 քմ/ շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և, նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Արարատ Բեժանյանին սեփականության իրավունքով պատկանող 0.05615 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 1980 թվականին ինքնակամ կառուցվել է 174.8 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերես՝ 143.1 քմ/ շինություններ՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, գյուղ Արզական Ամառանոցային թաղամաս 2-րդ փողոց փակուղի թիվ 6 հասցեի թիվ 20122025-07-0047 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով 0.05615 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա 1980 թվականին ինքնակամ կառուցված 174.8 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերես՝ 143.1 քմ/ շինությունները համարել օրինական՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Գ. Մանուկյանի 28.09.2026թ. թիվ ԳՄ/20688-2026 գրության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 06
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026 թվականի N 1035-Ա

ԱՐՇԱԿ ՉԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն և 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 88-Ն որոշումների դրույթներով, հաշվի առնելով Ա. Զարգարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել փոխելու Արշակ Անդրանիկի Զարգարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.00357 հա մակերեսով ք. Չարենցավան Գործարանային փողոց 2-րդ փակուղի թիվ 4 հասցեի հողատարածքի գործառնական նշանակությունը բնակելիից՝ որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողատարածք, իսկ նրա վրա կառուցված բնակելի նշանակության շինության գործառնական նշանակությունը՝ որպես հասարակական նշանակության շինություն՝ առևտրի սրահ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 06
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026 թվականի N 1034-Ա

ՌԱԶՄԻԿ ՃՈՐՈՒԽՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կոտայք-7» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը և հաշվի առնելով Ռ. Ճորուխյանի 29.09.2026թ. թիվ 4768/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում վերագրանցելու 26.07.2007թ. տրված թիվ 2272163 սեփականության վկայականով սեփականության իրավունքով Ռազմիկ Ճորուխյանին պատկանող հողատարածքն ու շինությունը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 06
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026 թվականի N 1033-Ա

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱԼԱՓԱՐՍ 11-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Մ. Գալստյանի 01.09.2026թ. թիվ 4187/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Մարիամ Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնք գյուղ Ալափարս 11-րդ փողոց թիվ 9 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-008-0096-0007/ 0.13 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 93.5 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ համաձայն «Գիս-Արտ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026WBRR8B ծածկագրի:
2. Օրինական ճանաչված շինությունների, ինքնակամ փակված 1 պատուհանի և ինքնակամ ձևափոխված 1 դռան համար 30-օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին վճարել 137.000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 06
Ք.Չարենցավան